

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

18 դեկտեմբերի 2017թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ Գիտխորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանի
բացակայության պատճառով նիստը վարեց փոխսնօրեն,
ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը:

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի ամփոփիչ հաշվետվությունը՝ «*Pseudomonas aeruginosa* և *Klebsiella pneumoniae* շտամների հակաբիոտիկ կայունության հայթհայթման ուղիների մշակում» վերնագրով թեմայի վերաբերյալ:
Զեկուցող՝ Ա. Հովհաննիսյան
3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի փոխսնօրեն ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանին, ով տեղեկացրեց, որ ուսումն ավարտելու պատճառով գիտխորհրդի կազմից դուրս է եկել ուսանողական խորհրդի նախագահ Սոնա Բաղդասարյանը, ում այժմ փոխարինում է մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Անուշ Ոսկանյանը: Ս. Վարդապետյանը նշեց, որ գիտխորհրդի կազմը ինստիտուտի կանոնադրությանը համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է ներգրավել նաև արտահամալսարանական և ընտրովի անդամներ: Ս. Վարդապետյանն առաջարկեց տալ հիմնավորված թեկնածություններ՝ գիտխորհրդի կազմը այլ մասնագետներով լրացնելու համար: Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանն առաջարկեց որպես արտահամալսարանական գիտխորհրդի կազմում ընդգրկել կ.գ.թ. Նաիրա Բաբկենի Չիչոյանին, ով ներկայումս հանդիսասանում է ֆարմակագնոզիա առարկայի դասախոս: Ս. Վարդապետյանն որպես ընտրովի անդամներ, առաջարկեց կ.գ.դ., պրոոֆեսոր Սուսաննա Միքայելի Բաղայանի և ք.գ.թ., դոցենտ Ժաննա Վլադիմիրի Սարգսյանի թեկնածությունները: Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահ Ա. Ոսկանյանը առաջարկեց բակալավրիատի 2-րդ և 4-րդ կուրսի ուսանողուհիներ Անահիտ Արմենի Ղազարյանի և Սյուզաննա Արսենի Ստեփանյանի թեկնածությունները՝ նշելով, որ վերջիններս ակտիվորեն մասնակցում են ինստիտուտի հասարակական կյանքին և ցուցաբերում են բարձր առաջադիմություն: Գիտխորհրդի մյուս անդամները հավանություն տվեցին ներկայացվող անձանց թեկնածություններին և առաջարկեցին ԵՊՀ ռեկտորի հաստատմանը ներկայացնել 24 ժողով քաղկացած գիտական խորհրդի նոր կազմը:

Որոշեցին՝ (միաձայն)

Հավանություն տալ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նոր կազմին և այն ներկայացնել հաստատման (կազմը կցվում է):

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի ամփոփիչ հաշվետվությունը՝ «*Pseudomonas aeruginosa* և *Klebsiella pneumoniae* շտամների հակաբիոտիկ կայունության հայթհայթման ուղիների մշակում» վերնագրով թեմայի վերաբերյալ:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանին, ով համառոտ ներկայացրեց «*Pseudomonas aeruginosa* և *Klebsiella pneumoniae* շտամների հակաբիոտիկ կայունության հայթհայթման ուղիների մշակում» վերնագրով թեմայի 11.12.2015թ.-10.12.2017թ. ժամանակահատվածի ամփոփիչ հաշվետվությունը և պատասխանեց հարցերին (հաշվետվությունը կցվում է): Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները:

Ա. Հովհաննիսյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում բացահայտվել և ուսումնասիրվել են Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի Մանրէների ավանդադրման կենտրոնում պահպանվող *Pseudomonas* և *Klebsiella pneumoniae* ցեղին պատկանող շտամներ, որոնք օժտված են կայունությամբ ինչպես բետա-լակտամային հակաբիոտիկների, այնպես էլ՝ ամինոգլիկոզիդների և քլորամֆենիկոլի նկատմամբ: Ստացված տվյալների հիման վրա հրատարակվել են 2 գիտական հոդված և 6 թեզիս:

Ելույթ ունեցան՝ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, բ.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր դրական գնահատեցին հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները և առաջարկեցին հաստատել հաշվետվությունը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «*Pseudomonas aeruginosa* և *Klebsiella pneumoniae* շտամների հակաբիոտիկ կայունության հայթհայթման ուղիների մշակում» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը և սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդին:

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ով նշեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան հանձնաժողով: Նա առաջարկեց հանձնաժողովի կազմում ընդգրկել հետևյալ անձանց.

Ղեկավար՝ ք.գ.դ. Սեկոյան Ի.Է.

Անդամներ՝ ք.գ.թ. Շեյրանյան Մ.Ա.

ք.գ.թ. Պետրոսյան Ս.Ղ.

կ.գ.թ. Սնիկյան Ա.Լ.

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.թ. Կ. Պետրոսյանը, ովքեր դրական արտահայտվեցին նշված անձանց թեկնածություններին և առաջարկեցին գիտխորհրդի ներկա գտնվող մյուս անդամներին ևս հավանություն տալ հանձնաժողովի առաջարկվող կազմին:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների ատենախոսական աշխատանքների արդյունքների հավաստիությունը հաստատող հանձնաժողովի առաջարկվող կազմը:
2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին մեկամսյա ժամկետում գիտխորհրդի հաստատմանը ներկայացնելու հանձնաժողովի կանոնակարգը:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան